ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«06» հուլիսի 2016թ. N 2468-Ա

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆ ՍԿՍԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ և 4-րդ մասերով, «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ և 71-րդ հոդվածներով՝ Երևան քաղաքի 2017 թվականի բյուջետային գործընթացն սկսելու նպատակով.

1. Հաստատել Երևան քաղաքի 2017 թվականի բյուջեի նախագծի մշակման աշխատանքների իրականացման ժամանակացույցը՝ համաձայն հավելվածի:
2. Ընդունել ի գիտություն, որ.
   1) 2017 թվականի բյուջետային ֆինանսավորման հայտերը ներառում են կապիտալ բնույթի ծախսերի մասով սահմանված կարգով փորձաքննություն անցած նախագծանախահաշվային փաստաթղթերը, իսկ ընթացիկ ծախսերի գծով՝ հաշվարկ–հիմնավորումները,
   2) Երևան քաղաքի 2017 թվականի բյուջետային ֆինանսավորման հայտերը կազմելիս պետք է հաշվի առնվեն «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 83-րդ հոդվածի 7-րդ կետով սահմանված պահանջները, մասնավորապես՝ Երևան քաղաքի զարգացման ծրագրերի հիմնական ուղղությունները:
3. Հանձնարարել Երևանի քաղաքապետի տեղակալներին, Երևանի գլխավոր ճարտարապետին, խորհրդականներին, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի առանձնացված և կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներին՝
   1) 2017 թվականի բյուջետային ֆինանսավորման հայտերը ներկայացնելիս հաշվի առնել համայնքի բնակիչներից, քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածի սուբյեկտներից ստացված առաջարկությունները,
   2) ապահովել սույն որոշման հավելվածով հաստատված ժամանակացույցով նախատեսված աշխատանքների իրականացումը,
   3) 15-օրյա ժամկետում սահմանված կարգով պատվիրել 2017 թվականին նախատեսվող կապիտալ բնույթի ծախսերի նախագծանախահաշվային փաստաթղթերը:
4. Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական վարչության պետին՝ զեկուցել ժամանակացույցով նախատեսված աշխատանքների կատարման ընթացքի շեղումների վերաբերյալ:
5. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների ղեկավարների վրա:

6. Սույն որոշման կատարման հսկողությունը իրականացնում է Երևանի քաղաքապետի տեղակալ Վ. Նիկոյանը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ *Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ*

Հավելված
Երևանի քաղաքապետի
2016 թվականի հուլիսի 6-ի
N 2468 - Ա որոշման

Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ա Ց Ո Ւ Յ Ց

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՆԱԽԱԳԾԻ ՄՇԱԿՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

Հ/Հ	Կատարողները	Կատարման ենթակա աշխատանքները և միջոցառումները	Փաստաթղթերն ստացող ստորաբաժանումներ (մասնակիցներ)	Աշխատանքների և միջոցառումների կատարման սահմանային ժամկետները
1	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական վարչություն	Երևան քաղաքի 2017 թվականի բյուջեի նախագծի հայտերի ձևերի և լրացման կարգի մշակում և տրամադրում	Երևանի քաղաքապետի տեղակալներ, Երևանի գլխավոր ճարտարապետ, խորհրդականներ, առանձնացված և կառուցվածքային ստորաբաժանումներ	մինչև 2016 թվականի հուլիսի 13
2	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական վարչություն	Երևան քաղաքի 2017 թվականի բյուջեի նախագծի կազմման համար պահանջվող լրացուցիչ տեղեկատվության և խորհրդակցության տրամադրում	Երևանի քաղաքապետի տեղակալներ, Երևանի գլխավոր ճարտարապետ, խորհրդականներ, առանձնացված և կառուցվածքային ստորաբաժանումներ	մինչև 2016 թվականի օգոստոսի 5
3	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի եկամուտների հաշվառման և գանձման վարչություն	Երևան քաղաքի 2017 թվականի բյուջեի եկամուտների կանխատեսումների վերաբերյալ քննարկումների անցկացում և համաձայնեցում	Երևան քաղաքի բյուջեի եկամուտներ և մուտքեր ապահովող կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումներ	մինչև 2016 թվականի օգոստոսի 26
4	Երևան քաղաքի բյուջեի եկամուտներ և մուտքեր ապահովող կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումներ	Երևան քաղաքի 2017 թվականի բյուջեի եկամուտների համաձայնեցված կանխատեսումների ներկայացում	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի եկամուտների հաշվառման և գանձման վարչություն	մինչև 2016 թվականի սեպտեմբերի 1
5	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի եկամուտների հաշվառման և գանձման վարչություն	Երևան քաղաքի 2017 թվականի բյուջեի նախագծի եկամուտների համաձայնեցված կանխատեսումների ներկայացում	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական վարչություն	մինչև 2016 թվականի սեպտեմբերի 5

Հ/Հ	Կատարողները	Կատարման ենթակա աշխատանքները և միջոցառումները	Փաստաթղթերն ստացող ստորաբաժանումներ (մասնակիցներ)	Աշխատանքների և միջոցառումների կատարման սահմանային ժամկետները
6	Ոլորտային կառուցվածքային ստորաբաժանումներ (ոլորտը համակարգողի ղեկավարությամբ)	Երևան քաղաքի 2017 թվականի բյուջեի նախագծի ծախսերի կանխատեսումների մշակման շրջանակներում ոլորտային քաղաքականության հարցերի շուրջ քննարկումների անցկացում և համաձայնեցում	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի առանձնացված ստորաբաժանումներ, բյուջեով նախատեսվող ծախսային ծրագրեր իրականացնող համայնքային կազմակերպություններ	մինչև 2016 թվականի սեպտեմբերի 5
7	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական վարչություն	Երևան քաղաքի 2017 թվականի բյուջեի նախագծի ծախսերի կանխատեսումների վերաբերյալ քննարկումների անցկացում և համաձայնեցում	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումներ	մինչև 2016 թվականի սեպտեմբերի 7
8	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումներ (ոլորտը համակարգողների հետ համաձայնեցված)	Երևան քաղաքի 2017 թվականի բյուջեի նախագծի կանխատեսումների ներկայացում	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական վարչություն	մինչև 2016 թվականի սեպտեմբերի 12
9	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական վարչություն	Երևան քաղաքի 2017 թվականի բյուջեի նախագծի վերաբերյալ քննարկումների անցկացում Երևանի քաղաքապետի տեղակալի մոտ	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումներ	մինչև 2016 թվականի սեպտեմբերի 30
10	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումներ (ոլորտը համակարգողների հետ համաձայնեցված)	Երևան քաղաքի 2017 թվականի բյուջեի նախագծի լրամշակված հայտերի ներկայացում	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական վարչություն	մինչև 2016 թվականի հոկտեմբերի 5
11	Երևանի քաղաքապետի տեղակալ	Երևան քաղաքի 2017 թվականի բյուջեի նախագծի վերաբերյալ քննարկումների անցկացում Երևանի քաղաքապետի մոտ և լրամշակում	Երևանի քաղաքապետի տեղակալներ, Երևանի գլխավոր ճարտարապետ, խորհրդականներ, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի առանձնացված և կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներ	մինչև 2016 թվականի հոկտեմբերի 17

Հ/Հ	Կատարողները	Կատարման ենթակա աշխատանքները և միջոցառումները	Փաստաթղթերն ստացող ստորաբաժանումներ (մասնակիցներ)	Աշխատանքների և միջոցառումների կատարման սահմանային ժամկետները
12	1. Երևանի քաղաքապետի տեղակալ 2. Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական վարչություն 3. Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի եկամուտների հաշվառման և գանձման վարչություն	Երևան քաղաքի 2017 թվականի բյուջեի՝ քաղաքապետի հետ համաձայնեցված նախագծի ներկայացում Համայնքի զարգացման քառամյա ծրագրի և տարեկան բյուջեի կառավարման խորհրդին այն հանրային քննարկման ներկայացնելու համար	Համայնքի զարգացման քառամյա ծրագրի և տարեկան բյուջեի կառավարման խորհուրդ	մինչև 2016 թվականի հոկտեմբերի 28
13	1. Երևանի քաղաքապետի տեղակալ 2. Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական վարչություն 3. Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի եկամուտների հաշվառման և գանձման վարչություն	Համայնքի զարգացման քառամյա ծրագրի և տարեկան բյուջեի կառավարման խորհրդի կողմից դրական եզրակացություն ստացած Երևան քաղաքի 2017 թվականի բյուջեի լրամշակված նախագծի ներկայացում հանրային քննարկման		մինչև 2016 թվականի նոյեմբերի 1
14	1. Երևանի քաղաքապետի տեղակալ 2.Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական վարչություն 3. Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչություն	Հանրային կամ շահագրգիռ անձանց հետ հանդիպումների, բաց լսումների, քննարկումների կազմակերպում		մինչև 2016 թվականի նոյեմբերի 16
15	Համայնքի զարգացման քառամյա ծրագրի և տարեկան բյուջեի կառավարման խորհուրդ	Հանրային քննարկումների արդյունքում Երևան քաղաքի 2017 թվականի բյուջեի լրամշակված նախագծի վերաբերյալ եզրակացության ընդունում այն Երևանի ավագանուն ներկայացնելու համար		մինչև 2016 թվականի նոյեմբերի 21

Հ/Հ	Կատարողները	Կատարման ենթակա աշխատանքները և միջոցառումները	Փաստաթղթերն ստացող ստորաբաժանումներ (մասնակիցներ)	Աշխատանքների և միջոցառումների կատարման սահմանային ժամկետները
16	1. Երևանի քաղաքապետի տեղակալ 2. Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական վարչություն 3. Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի եկամուտների հաշվառման և գանձման վարչություն	«Երևան քաղաքի 2017 թվականի բյուջեի մասին» Երևանի ավագանու որոշման նախագծի ներկայացում	Երևանի ավագանու խմբակցություններ և անդամներ	մինչև 2016 թվականի նոյեմբերի 22

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ Ս. ՄԱԿԱՐՅԱՆ